

Ա.Ե.ԼԻՍԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ. Ֆեյխբա Նևը և հայ քրիստոնեական մատենագրու-  
թյունը. Երևան, «Արագբերս» հրատ., 2001, 92 էջ, Մարի Ֆեյխտե Բրոսսեն հա-  
յագետ. Երևան, «Հայինֆո-Արտագբերս» հրատ., 2002, 115 էջ, Վիկտոր Լանգլուան  
հայագետ. Երևան, «Լուսակն» հրատ., 2003, 118 էջ:

Նախընթաց երեք տարիներին հրատա-  
րակվեցին բանասիրական գիտությունների  
գովտոր Աելիտա Դոլուխանյանի երեք նոր  
աշխատությունները՝ նվիրված եվրոպացի  
Հայագետներ Ֆեյխբա Նևին (2001), Մարի  
Բրոսսին (2002) և Վիկտոր Լանգլուանին  
(2003): Արևելագետ գիտնականներ, որոնք  
իրենց լայն հետազոտությունների հետ  
միասին զբաղվեցին Հայագիտության ամե-  
նաբաղմաղան Հարցերի քննությանը ու  
լուսարանմամբ, և որոնց դործը մեր ժո-  
ղովրդի կյանքում հիրավի բացառիկ է:  
Նրանք նվիրյալ անհատներ էին վեր քա-  
ղաքական ու պետական շահերից, որոնք  
ազնվորեն ծառայեցին գիտությանը, աչքի  
ընկան իրենց խոստովությանը և բարձր  
բարոյականությանը այն պահին, երբ վիթ-  
խոսրի մշակութային ժառանգությունն ստեղ-  
ծած Հայ ժողովուրդը XIV դ. սկսած (իսկ  
XVIII–XIX դդ. ամբողջովին) Հայտնվել էր  
քաղաքական, տնտեսական և մշակութային  
մեկուսացման մեջ:

Արևմտյան աշխարհում այդ ցավալի  
«լուսությունը» խախտողներից մեկը եղավ  
Ֆեյխբա Նևը (1816–1893): Նա ծնունդով  
բելգիացի էր, մասնագիտությամբ՝ արևելա-  
գետ: Իր աշխատությունները (նաև Հայա-  
գիտական) նա հրատարակել է ֆրանսերեն  
լեզվով: Բացի միջնագարյան Հայ հելլենակ-  
ներից կատարած իր հմուտ թարգմանու-  
թյուններից, նա նաև գրել է Հայագիտական  
կրեք գլուխգործոցային աշխատություն-  
ներ. ա) «Թուլմա Մեծոփեցու Պատմությու-  
նը» (1855), բ) «Բրիտանյա Հայաստանը և  
իր մատենագրությունը» (1886), գ) «Հայ  
գրականության մի քանի արժանահիշատակ  
հրատարակումները» (1888): Ա. Դոլուխան-  
յանը նշում է. «Բելգիացի Հայագետի կար-  
ծիքով Հայաստանն իր հոգևոր կյանքով  
մոտենում է հունական հնությունը...», իսկ  
մյուս կողմից՝ Հայերը արևելյան կենսակեր-

պի կրողներ են» (էջ 11): Սա նշանակում է,  
որ եվրոպացիք կոնկրետ մատնանշում են  
Հայերի տեղը Համաշխարհային մշակույթի  
Համապատկերում, գիտակցում նրա կատա-  
րածի կարևորությունը հատկապես մշակու-  
թային ավազույթներով հարուստ ասիական  
ժողովուրդների շարքում: Միաժամանակ  
նրանք կարևորում են Հայկական-քրիստո-  
նեականը եվրոպական մշակույթի մեջ, այս  
հանգամանքը մնում է ռազմավարական  
կարևոր ուղղություն մերօրյա Հայագի-  
տության համար:

Նկատելի է, որ Ֆ. Նևին հիմնականում  
հետաքրքրել են քրիստոնեական ընդհա-  
նուր պատմության և աստվածաբանության  
համար սուանցքային հեղինակները (Եղի-  
շեն, Գր. Նարեկացին, Ն. Շնորհալին, Հ.  
Դրասխանակերտցին, \* Թ. Մեծոփեցին և  
այլք): Ուսումնասիրությունը (ընդհանուր  
դեպքում նաև որոշ աշխատությունների բո-  
վանդակության փոխադրությունը) Ա. Դո-  
լուխանյանը կատարում է՝ ապրիլ դրանք  
հետևյալ խորագրերի տակ. 1. Բրիտանյա  
Հայաստանը և նրա մատենագրությունը, 2.  
Թուլմա Մեծոփեցուն նվիրված աշխա-  
տությունը, 3. Հայ գրականության մի քա-  
նի արժանահիշատակ հրատարակումները:  
Աշխատությանը կցված են ներածություն,  
վերջաբան և ծանոթագրություններ, որոնք  
դրան հաղորդում են խիստ գիտական  
ընդլայն: Անդրադառնալով հատկապես Եղի-  
շի երկին՝ Ֆ. Նևն ուղղակիորեն քննում է  
քրիստոնեական հավատքի համար մղված  
ամենատառջին մեծ պայքարի՝ Ավարայրի  
ճակատամարտի արդյունքները: Նրա կար-  
ծիքով այն մեզ համար եղել է պարտու-  
յուն, քանզի և՛ մասնակիցները, և՛ հատկա-  
պես կազմակերպիչները հերոսաբար նահա-  
տակվել են: Սակայն Հայերս այդ հարցում  
հակառակ համոզմունքն ունենք, չէ՞ որ  
կան հաղթանակներ, որ պարտության են

Հավասար և, ընդհակառակը, կան պարտություններ, որ Հաղթանակի են Հավասար, ինչպես Բորոդինոյի ճակատամարտը ռուսների համար: Եղիշեի Պատմության հետ կասկած՝ նա ուշադրություն է դարձնում Հեղինակի կենսագրության ինչ-ինչ հարցերի ճշգրտման և եվրոպական լեզուներով կատարված թարգմանությունների գնահատման վրա: Բարեբախտաբար, նա այն հետազոտողներից է, ովքեր Եղիշեին և նրա ժամանակակիցներին համարեցին հետագա դարերի պատմիչներ և դրանով մեծ բարոյական հարված հասցրին Հայ դրականությանը՝ կասկածի տակ առնելով սկզբնաղբյուրների արժանահավատությունը:

Ֆ. Նևը կատարում է Հայտնի Հայագետ Սեն-Մարտենի կողմից ֆրանսերեն թարգմանված Հ. Դրասիանակերտցու Պատմության ոճական, ինչպես նաև Հեղինակի կենսագրության մանրամասնի ճանգամանակի քննություն: Նրա կարծիքով գրքի մեկենասը եղել է Աշոտ II-ը, և նրա մասին է այդ ստեղծագործությունը: Իսկ պատմիչը կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև Հայոց պատմության Հնագույն շրջանից և դեպի Հույն, որ իր օրերում չկան Մ. Խորենացու պես մեծություններ: Սելջուկների, մոնղոլների, ինչպես և խաչակիրների արշավանքների մասին մանրամասնները հաղորդում են Մ. Ուռհայեցին և Թ. Մեծոփեցին: Ավելին, այս Հեղինակները հաղորդում են այնպիսի կարևոր տեղեկություններ, որոնք չեն հանդիպում այդ ժամանակաշրջանի եվրոպացի և բյուզանդական հեղինակների երկերում: Միտմամանակ Ֆ. Նևը բարձր է գնահատում Մխիթարյան միաբանների ազգանվեր գործունեությունը: Նա նկատի ունի Գ. Ավետիքյանին, Գ. Այվազյանին, Ղ. Ալիշանին և մյուսներին, որոնք մեծ գործ էին կատարում Հայերեն սկզբնաղբյուրների ուսումնասիրության և տարածման ուղղությամբ: Նրա աչքից չի վրիպում այն, որ եվրոպական երկրներից միայն Ռուսաստանն է լրջորեն նպաստում Հայ Հեղինակների երկերի հրատարակությանը, իր մայրաքաղաքում և մեծ քաղաքներում գտնվող բուհերում բացում Հայագիտական ամբիոններ, կազմակերպում արշավախմբեր՝ Հայաստանի պատմաճակատ-

թային արժեքներն ուսումնասիրելու: Սակայն Ռուսաստանում Հայագիտությունը հիմնականում զարգացնում են ազգութայամբ Հայ գիտնականները, մինչդեռ եվրոպայում օտարազգիները: Ֆելիքս Նե գիտնականի, մտավորականի և մարդու դիմանկարը արժանիորեն է ներկայացվում այն ժողովրդին, որը միշտ էլ երախտագիտութայամբ է վերաբերվում իր լավագույն բարեկամներին:

Նույնքան կարևոր դեմք է Մարի Ֆելիսիտե Բրոսսեն (1802-1880)՝ մեր ազգային մեծերի կողմից բարձր գնահատականի և ուշադրության արժանացած մյուս գիտնականը, ում ծննդյան 200-ամյակին է նվիրված հրատարակված աշխատությունը: Սկսելով իր գործունեությունը չինարենի ուսումնասիրությամբ՝ հետագայում նա զբաղվում է վրացագիտությամբ, իսկ քիչ ավելի ուշ՝ Հայագիտությամբ: Այդ իրողությունը պատճառաբանվում է երկու հանգամանքով՝ մայրը ցանկանում էր, որ որդին հոգևորական դառնա: Սակայն մեկերկու տարի այդ ոլորտում իր ընդունակությունները փորձելուց հետո նա արդեն 1825 թ. իր կոչումը տեսնում է գիտության աշխարհում: Երիտասարդին հատկապես հետաքրքրում են պատմագրությունը, տոմարագիտությունը, կրոնաստիպածաբանական ոլորտը, դրամագիտությունը և ճարտարագիտությունը: Մյուս կողմից՝ նա խորը հետաքրքրություն է ցուցաբերում հատկապես արևելաքրիստոնեական մշակութային արժեքների հանդեպ: 1845 թ. մեծ գիտնականը եղել է Ս. Ղազար կղզում, իսկ 1847-1848 թթ. այցելել է Հայաստան (Ս. Էջմիածին) և հենց այդ ժամանակ էլ դրել իր հանրահայտ «Անիի ավերակները» աշխատությունը (1848), որը Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Ն. Մառի համանման աշխատությունների հետ դառնում է միջնադարյան մշակութային հրաշակերտի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքերից մեկը: 1836 թ. նա դառնում է Ռուսաստանի կայսերական ակադեմիայի կցված անդամը և տեղափոխվում Ս. Պետերբուրգ, ուր ապրում և գործում է գրեթե մինչև կյանքի վերջը: Ռուսաստանյան նրա գործունեությունն արգասավորվում է Հայ Հեղինակներից Թ. Արծրունու, Մ. Այրիվանեցու, Ս. Օր-

բելյանի, Ուլտանեսի, Կ. Գանձակեցու, Ա. Դավրիթեցու և այլոց աշխատությունների թարգմանություններ, ուսումնասիրություններ ու տարածմամբ: Նշանավոր գիտնականի մասին իր գիրքը Ա. Դոլուխանյանը բաժանել է երկու գլուխների. 1. Մ. Բրոսսեն Հայ պատմիչների թարգմանիչ և 2. Մ. Բրոսսեի Հայպիտական Հետազոտությունների բաղմաբեցությունը: Ներկայացվել է նրա Հայագիտական աշխատությունների մատենագիտական դանկը (մոտ 68 աշխատություն): Արժեքներով Բրոսսեի տոմարագիտական, սլավոնաբանասիրական, դրամագիտական ուսումնասիրությունները՝ գիտնականը եզրակացնում է. «Ձերանսիացի անվանի Հայագետ, վրացագետ արևելագետ Մ. Բրոսսեն Ռուսական կայսերական ակադեմիայի իսկական անդամը, նվիրույթի բազմաթիվ ակադեմիկոսների, հնագիտական, ազգագրական և աշխարհագրական ընկերությունների անդամը, բազմաթիվ առաջնակարգ շքանշանների և մրցանակների կրողը, Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի և Մոսկովայի արևելյան լեզուների Հազարյան ինստիտուտի անդամն այդ ամենին արժանացել էր իր վիթխարի գիտական ծառայությունների համար» (էջ 89): Մեծ հայագետի գերն առավել կարևորվում է նրանով, որ նա 1. Հայ ժողովրդի պատմական հուշարձանները միջազգայնացրեց (1856 թ. առաջարկելով Ռուսաստանի կայսերական ակադեմիային ստեղծել Հայ պատմիչների դրամատիկոս), 2. միջազգային հանրությունը ներկայացրեց Հայոց Անի մայրաքաղաքն իր մշակութային կոթողներով, 3. ուսումնասիրեց Հայ նախարարական մի քանի տների ծագումը, 4. Հայ-վրացական առնչությունները ներկայացրեց կրած փոխազդեցություններով, 5. ներկայացրեց Հայկական տոմարի էությունը, 6. հրատարակեց և շրջանառեց էջմիուսնի մեծարժեք գրացուցակները և այլն: Լինելով խելացի և բարձրաճանաչ մարդ՝ Մ. Բրոսսեն թարգմանելիս այն երկերն էր ընտրում, որոնք մեծ հետաքրքրություն կառաջացնեին խստապահանջ եվրոպական ընթերցողի մոտ: Միաժամանակ շոշափվել են արաբագիտական, բյուզանդագիտական, եգիպտագիտական, ասորագիտական ու պարսկագիտական բազմաբնույթ խնդիրներ՝ կապված նաև

խաչակիրների արևելյան արշավանքների հետ: Իր գործունեության ահա այսպիսի բազմազանություն է Հայ Հասարակությանը ներկայանում մեր ժողովրդի բարեկամը և ազնիվ գիտնականը՝ Մարի Բրոսսեն: Անվարան կարելի է ասել, որ նշանավոր գործչի գիտնականը կերտված ու ամբողջացված է լիարժեքորեն:

Եվրոպական Հայագետների մեջ ամենաբերիտասարդ և ամենաօժտված Հետազոտողներից մեկն է Ֆրանսիացի արևելագետ Վիկտոր Լանգլուան (1829–1869): Գիտնականի համար այդքան կարճ կյանքի ընթացքում նրան հաջողվեց անել այն, ինչ միայն սիրանք կարելի է անվանել: Ծնվել է Տիբիլում, սովորել Հին Հռոմարտականների դպրոցի արևելյան լեզուների բաժնում և Նապոլեոն III-ի հանձնարարությամբ 1852 թ. իրագործել է իր ուղևորությունը դեպի Կիլիկիա և Փոքր Հայք: Հաջորդ տարի նա վերադառնում է Հարուստ նյութով, արժեքավոր գտածոներով: Զբաղարարվելով երկրագործի նա նախաձեռնում է նաև Ֆրանսիական ու իտալական դիվանների հարուստ նյութերի հավաքման և ուսումնասիրման կարևոր գործը: Հայտնաբերվում են Հայ-Ֆրանսիական, Հայ-իտալական դիվանագիտական զանազան փաստաթղթեր, որոնք նոր լույս են սփռում ուսումնասիրվող հարցերի վրա: Այդ վավերաթղթերը գնելով դիտական շրջանառության մեջ՝ նա մեծ ծառայություն է մատուցում նաև միջնադարյան պատմագիտության զարգացմանը և Հայերի՝ Միջերկրական ծովի ավազանի երկրների հետ ունեցած առնչությունների նորովի բացահայտմանը: Նույնքան արժեքավոր են նրա աղբյուրագիտական ուսումնասիրությունները և դրանց թարգմանություններն ու հրատարակումը Ֆրանսիայում լինելով: Ցավոք, գիտնականը մահացել է վաղաժամ անավարտ թողնելով բազմաթիվ մտահղացումներ, իսկ մեր մշակույթը կորցրել է մի հմուտ հետազոտողի և մեծ բարեկամի:

Լինելով ազնիվ մարդ՝ նա արձագանքել է Ջեյթունի ապստամբությանը և թուրքական պետության վարած բռնի քաղաքականությանը՝ 1863 թ. գրելով «Թուրքիայի հայերը և Ջեյթունի ապստամբությունը» հոդվածը: «Որպես մարդասեր՝ Վիկտոր Լանգ-

լուան իր բոլոր գործերում բողոքի ձայն է բարձրացրել թուրքական հայաջինջ քաղաքականության դեմ», – գրում է Ա. Դուրուխանյանը (էջ 112): Այս ուսումնասիրությունը բաժանված է երեք գլուխների. 1. Վ. Լանգլուան և Հայ գրականությունը, 2. Ճանապարհորդություն դեպի Կիլիկիա. կիլիկյան Հայ թագավորների դրամներն ու հրովարտակները, 3. Վ. Լանգլուան և Հայ պատմագրությունը: Գրքում առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում հետադուրդի այն դրույթների վրա, որոնցով նա Հայ գրականությունը համարում է արևելաքրիստոնեական մշակույթի մեծագույն նվաճումներից մեկը, ապացուցում, որ նախամաշտոցյան շրջանում ևս Հայերը դրականություն ունեցել են: Մշակելով Հայագիտության արժեքային համակարգը նա նախ կարևորում է Մխիթարյանների դերը և ազդեցությունը եվրոպական Հայագիտության վրա, այնուհետև համակողմանորեն ուսումնասիրում և թարգմանաբար ներկայացնում է Գրիգոր Մագիստրոս Պաշլավենու կյանքն ու նրա նամականին (83 թղթերով, իրականում՝ 87-ն են): Պաշլավենիների ծագումնաբանության, XI դ. և հետագայում խաղաղած պատմական գերակատարության մասին Հայագետի նկատառումները չափազանց կարևոր են: Միայն այն, որ Մագիստրոսի նամականին, դեռևս Հայերեն չտպագրված, լույս է տեսել Ֆրանսերենում (1869), այդ ժամանակվանից դրվելով գիտական շրջանառության մեջ, մեծ ներդրում է Հայ գրականության համար: 1852 թ. ուղևորությանը և դրա արդյունքների քննությանն են նվիրված նրա վաղ շրջանի գիտական հեռագրությունների մեծ մասը: Այդ հենքի վրա արժեքավորվել է հատկապես 1859 թ. հայկական դրամների մասին տպագրած նրա հետազոտությունը, որով նա լուծում է ոչ միայն հայկական դրամների յուրահատկությունների հարցը, այլև անդրադառնում Հայ Հնագույն դիպրաբանությանը: Վ. Լանգլուային ևս, ինչպես իր ժամանակակից մյուս գիտնականներին, հետաքրքրել է խաչակիրներն ու Ռուբինյաններին, նրանց միջպետական կապերը, ինչպես և Ռուբինյանների ու Ֆրանսիական

արքաների փոխհարաբերությունների խնդիրը: Հայ պատմիչներից Մ. Խորենացուն Վ. Լանգլուան համարել է V դ. պատմիչ՝ չնայած եղած հակառակ պնդումներին: Համակողմանի քննությամբ ճշգրտել է նրա օգտագործած աղբյուրները: Դրանց հետ կապված հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել է Միքայել Ասորու ժամանակագրությունը: Այս շարքում հույժ կարևոր է նաև Սմբատ Գունդատաբլի Պատմության հայտնաբերումը և ուսումնասիրությունը Վ. Լանգլուայի կողմից, որին Հաջորդել են երկի մի քանի հրատարակությունները: Ըստ արժանվոյն են ներկայացված վաղամեծիկ գիտնականի վաստակը և մեր մշակույթին մատուցած անգնահատելի ծառայությունները:

Հայագիտությունը վերջին շրջանում ազդավարական լուրջ վերադասավորումներ ու նշանակալից նոր առաջընթաց քայլեր է կատարում: Դա վերաբերում է թե՛ ներքին տեսական-գեղարտական, թե՛ դրձնական-համակարգային խնդիրների նորովի ուսումնասիրությանը: Այդ մասին նպատակն է. 1. օտար լեզուներով գոյություն ունեցող գիտական արժեքները համակարգելու և ներկայացնելու Հայ գիտական հասարակայնությանը և ժողովրդին՝ դրանով ավելի մեծ ծավալով շրջանառելու եղած ուսումնասիրությունները (հնարավորություն դեպքում նաև թարգմանելու), 2. այդ ժուռանգությունը, իսկ լայն իմաստով մեր մասին գիտությունը, վերջնականապես ամբողջացնելու, հաստատելու Հայկական հույժ վրա, գուգադրելու մեզանում եղածի հետ: Մանավանդ այս տեսակետից ձեռնարկն իսկապես հաջողված է: Լայն առումով Հայագիտությունը դառնում է գերակա ուղղություն Հայ մշակույթի ուսումնասիրության ոլորտում: Դա չափազանց կարևոր է մշակույթների պատերազմի այս դժվարին ժամանակներում:

Ա. Դուրուխանյանի սույն ուսումնասիրությունները կարևոր ներդրում են Հայագիտության զարգացման և օտարազգի գիտնականների գնահատման ուղղությամբ, արժանի տուրք այդ բարի ու մեղ համար թմանկ մարգկանց հիշատակի Հանդես: